Հարկային տեղեկատվական համակարգ
www.taxinfo.am
taxinfo.am iTax

| | |
|---|---|
| **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ**<br>**ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ** | Փաստաթղթի հերթական համարը N________________<br>«_________» ________________________ 20 ____թ.<br>*(լրացվում է հարկային մարմնի կողմից)* Կ.Տ.<br><br>Բնապահպանական մարմնի կողմից վարվող հաշվարկ-հաշվետվությունների գրանցման մատյանում գրանցման հերթական համարը N________________<br>«_________» ________________________ 20 ____թ.<br>Գրանցում կատարողը ______________________________<br>______________________________<br>*(անունը, ազգանունը, պաշտոնը)*<br>______________________________ Կ.Տ.<br>*(բնապահպանական տարածքային մարմնի ղեկավարի ստորագրությունը)* |

| | | |
|---|---|---|
| **ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ**<br>*(Այն հաշվետու տարին և այն հաշվետու եռամսյակը, որի համար ներկայացվում է հաշվարկ-հաշվետվությունը)* | Տարեթիվը____թ. | ____________________ եռամսյակը<br>*(հաշվետու տարվա չորրորդ եռամսյակի համար նաև «տարեկան» նշումը)* |

## ՀԱՇՎԱՐԿ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ [1]

| | |
|---|---|
| իրավաբանական անձի անվանումը, կազմակերպաիրավական ձևը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը, հայրանունը և ազգանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով) | |
| իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը | |
| իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը հարկային մարմնի կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը | |
| ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) սոցիալական ապահովության քարտի համարը | |
| իրավաբանական անձի (ֆիզիկական անձի) աշխատանքային (տան) հեռախոսահամարը | |

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ [2]

| Բնապահպանական և բնօգտագործման վճարների տեսակներ | Հաշվարկ-ված վճարը չափա-քանակների սահման-ներում [2.1] | Հաշվարկ-ված վճարը չափաքա-նակները գերազան-ցող մասի համար բազմապա-տիկ դրույքաչա-փերով [2.2] | Հաշվարկված վճարը զրոյական չափաքանակ-ների դեպքում բազմապատիկ դրույքաչա-փերով [2.3] | Ընդամենը հաշվարկված վճարը [2.4] | Ընդամենը վճարված է վճար հաշվետու տարվա սկզբից [2.5] |
|---|---|---|---|---|---|
| Անրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար [2.6] | | | | | |
| Ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար [2.7] | | | | | |
| Շրջակա միջավայր արտադրության և սպառման թափոնների տեղադրման համար [2.8] | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար [2.9] | | | | | |
| Սակերևութային ջրերի օգտագործման համար [2.10] | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ստորերկրյա քաղցրահամ ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար [2.11] | | | | | |
| Հանքային ջրի արդյունահանված և ածխաթթու գազի արտադրված ծավալների համար [2.12] | | | | | |
| Պինդ օգտակար հանածոների (բացառությամբ աղի) մարված պաշարների համար [2.13] | | | | | |
| Կենսապաշարների օգտագործման համար [2.14] | | | | | |
| Ընդամենը բնապահպանական և բնօգտագործման վճարներ [2.15] | | | | | |
| Վճարների գծով արտոնություններ________________________________ [2.16] | | | | | |
| Վճարման ենթակա բնապահպանական և բնօգտագործման վճարներ [2.17] | | | | | |

- Հաշվարկ-հաշվետվության [1] բաժնում լրացվում են հաշվարկ-հաշվետվություն ներկայացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) տվյալները: Հաշվարկ-հաշվետվություն ներկայացնելը պարտադիր չէ իրավաբանական և ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերի) կողմից շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների ներմուծման և իրենց պատկանող ավտոմեքենաներից, մեխանիզմներից ու շարժիչավոր լողամիջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարների մասով, ինչպես նաև բնօգտագործման համար մինչև մեկ տարի ժամկետով համապատասխան պայմանագրեր ունեցող ֆիզիկական անձանց (բացառությամբ՝ անհատ ձեռնարկատերերի) համար,
- Հաշվարկ-հաշվետվությունում արժեքային ցուցանիշները (բացառությամբ դրույքաչափերի) արտացոլվում են հազար դրամներով (ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ), իսկ բնեղեն ծավալային ցուցանիշները՝ սահմանված համապատասխան չափման միավորներով (ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ): Բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերը հաշվարկ-հաշվետվությունում արտացոլվում են դրամներով (ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ): Արտարժույթով սահմանված դրույքաչափերը ՀՀ դրամով հաշվարկելիս որպես փոխարժեք կիրառվում է հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ամսվա 20-րդ օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած՝ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի պաշտոնական (հաշվարկային) փոխարժեքը,
- Հաշվարկ-հաշվետվության բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկի մասում ([2] բաժնում) արտացոլվում են հաշվետվու ժամանակաշրջանում բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկային ցուցանիշները և վճարված գումարների մասին տեղեկատվությունը՝
- [2.6]-ից [2.14] տողերի [2.1]-ից [2.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են հաշվարկ-հաշվետվության համապատասխանաբար [3]-ից [11] բաժինների «ընդամենը» տողերի հաշվարկային ցուցանիշները,
- [2.15] տողի [2.1]-ից [2.4] սյունակներին համապատասխանող վանդակներում լրացվում են [2.6]-ից [2.14] տողերի համապատասխան ցուցանիշների հանրագումարները,
- [2.16] տողին համապատասխանող վանդակում լրացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով վճարողին վերապահված արտոնությունների ընդհանուր գումարը՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով ([2.16] տողում պարտադիր լրացնելով արտոնվող վճարատեսակների՝ [2.6]-ից [2.14] տողերից համապատասխան տողերի համարները),
- [2.17] տողին համապատասխանող վանդակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում վճարման ենթակա բնապահպանական և բնօգտագործման վճարների ընդհանուր գումարը ([2.15] տողի [2.4] սյունակին և [2.16] տողին համապատասխանող վանդակների մեծությունների տարբերությունը): ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնություններ վերապահված չլինելու դեպքում [2.15] տողի [2.4] սյունակին համապատասխանող վանդակի մեծությունը տեղափոխվում է [2.17] տողին համապատասխանող վանդակ,
- [2.6]-ից [2.15] տողերի [2.5] սյունակին համապատասխանող վանդակներում լրացվում են համապատասխան վճարատեսակների գծով (նաև ընդամենը) ՀՀ պետական բյուջե փաստացի վճարված գումարները՝ հաշվետվու տարվա սկզբից աճողական կարգով, հաշվարկ-հաշվետվությունը բնապահպանական մարմին գրանցման ներկայացնելու օրվա դրությամբ:

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- Հաշվարկ-հաշվետվության բնապահպանական վճարների հաշվետվության մասում (հաշվարկ-հաշվետվության [3], [4], [5] և [6] բաժիններ) արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանում «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի համապատասխանաբար 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետում նշված ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման, 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման, 3-րդ հոդվածում նշված շրջակա միջավայր արտադրության և սպառման թափոնների տեղադրման, ինչպես նաև 4-րդ հոդվածում նշված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների իրացման ծավալները և բնապահպանական վճարների հաշվարկը: Հաշվարկ-հաշվետվության [3] բաժնում չեն ներառվում ավտոմեքենաներից, մեխանիզմներից և շարժիչավոր լողամիջոցներից «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» ենթակետերում նշված վնասակար նյութերի արտանետման ծավալներն ու բնապահպանական վճարի հաշվարկը, իսկ [6] բաժնում չեն ներառվում ՀՀ ներմուծված շրջակա միջավայրին վնաս պատճառող՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում նշված ապրանքների ներմուծման և (կամ) իրացման ծավալներն ու բնապահպանական վճարի հաշվարկը:

| ԱՄՐԱԿԱՅՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | | | | | [3] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանում օդային ավազան արտանետված վնասակար նյութերի անվանումները | Հաշվետու ժամանակաշրջանում արտանետված վնասակար նյութերի համապատասխան փաստացի ամբողջ ծավալները (տոննա) | Արտանետումների փաստացի ծավալները չափաքանակներ սահմանված լինելու դեպքում (տոննա) | | | | | Արտանետումների փաստացի ծավալները զրոյական չափաքանակների դեպքում (տոննա) | | Բնապահպանական վճարի դրույքաչափերը (դրամ) | Հաշվարկված բնապահպանական վճարը (հազ. դրամ) | | | |
| | | Չափաքանակները | Ժամանակավոր չափաքանակները | Արտանետումների փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում | Չափաքանակները մինչև 5 անգամ գերազանցող արտանետումների փաստացի ծավալները | Չափաքանակները 5 անգամից ավելի գերազանցող արտանետումների փաստացի ծավալները | Օրենքով սահմանված չափաքանակները չգերազանցող արտանետումների փաստացի ծավալները | Օրենքով սահմանված չափաքանակներին հավասար կամ դրանք գերազանցող արտանետումների փաստացի ծավալները | | Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում | Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող ծավալների համար բազմապատիկ դրույքաչափերով | Հաշվարկված վճարը զրոյական չափաքանակների դեպքում բազմապատիկ դրույքաչափերով | Ընդամենը |
| [3.1] | [3.2] | [3.3] | [3.4] | [3.5] | [3.6] | [3.7] | [3.8] | [3.9] | [3.10] | [3.11] | [3.12] | [3.1 3] | [3.14] |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | | | | |

- [3.1] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում ամրակայված աղբյուրներից օդային ավազան փաստացի արտանետված՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետում նշված վնասակար նյութերի համապատասխան անվանումները, իսկ [3.2] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում [3.1] սյունակում նշված փաստացի արտանետված վնասակար նյութերի համապատասխան ամբողջ ծավալները,
- [3.3] սյունակում լրացվում են ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար սահմանված կարգով հաստատված անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու թույլտվություններով սահմանված արտանետումների նորմատիվները՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով,
- [3.4] սյունակում լրացվում են տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած բնապահպանական միջոցառումների ծրագրի հիման վրա ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից սահմանված օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների ժամանակավոր (մինչև հինգ տարի ժամկետով) չափաքանակներով սահմանված արտանետումների

նորմատիվները՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով (այս դեպքում [3.3] սյունակում լրացվում է «0»),

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու թույլտվություն չունենալու՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [3.3] և [3.4] սյունակներում լրացվում է «0»,
- [3.5] սյունակում լրացվում են արտանետված վնասակար նյութերի փաստացի ամբողջ ծավալների համար [3.3] կամ [3.4] սյունակում նշված համապատասխան չափաքանակները չգերազանցող ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [3.5] սյունակում լրացվում է «0»,
- [3.6] սյունակում լրացվում են արտանետված վնասակար նյութերի փաստացի ամբողջ ծավալների համար [3.3] սյունակում նշված չափաքանակները մինչև 5 անգամ գերազանցող, իսկ [3.7] սյունակում լրացվում են այդ չափաքանակները 5 անգամից ավելի գերազանցող համապատասխան ծավալները: Ժամանակավոր չափաքանակներ սահմանված լինելու դեպքում արտանետման փաստացի ամբողջ ծավալների համար [3.4] սյունակում նշված ժամանակավոր չափաքանակները գերազանցող ամբողջ ծավալները լրացվում են միայն [3.6] սյունակում (այս դեպքում [3.7] սյունակում լրացվում է «0»): Բացառապես չափաքանակների սահմաններում փաստացի արտանետումների, ինչպես նաև զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [3.6] և [3.7] սյունակներում լրացվում է «0»,
- Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում արտանետված վնասակար նյութերի համապատասխան փաստացի ամբողջ ծավալները լրացվում են [3.8] սյունակում, եթե արտանետումների փաստացի ծավալները չեն գերազանցում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված՝ ըստ վճարի օբյեկտների համապատասխան չափաքանակները: Այդ չափաքանակներին հավասար կամ դրանք գերազանցող համապատասխան փաստացի արտանետումների ամբողջ ծավալները լրացվում են [3.9] սյունակում,
- [3.10] սյունակում լրացվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետով սահմանված համապատասխան դրույքաչափերը, իսկ [3.11] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([3.5] սյունակի) համար հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([3.5] սյունակի համապատասխան տող X [3.10] սյունակի համապատասխան տող (արտահայտված հազար դրամներով)),
- [3.12] սյունակում լրացվում են չափաքանակները (այդ թվում՝ ժամանակավոր չափաքանակները) գերազանցող փաստացի ծավալների ([3.6] և [3.7] սյունակների) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([3.10] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափերով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները՝ ([3.6] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ) և ([3.7] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ) մեծությունների հանրագումար (արտահայտված հազար դրամներով),
- [3.13] սյունակում լրացվում են զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում արտանետումների փաստացի ամբողջ ծավալների ([3.8] կամ [3.9] սյունակների) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([3.10] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափերով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները՝ ([3.8] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով) կամ [3.9] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով),
- [3.14] սյունակի տողերում լրացվում են [3.11], [3.12] և [3.13] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [3.11], [3.12], [3.13] և [3.14] սյունակների «ընդամենը» տողերում լրացվում են այդ սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՋՐԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | [4] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջա-նում ջրային ավազան արտանետված վնասակար նյութերի և միացությունների անվանումները | Հաշվետու ժամանակաշրջանում արտանետումների համապատասխան փաստացի ամբողջ ծավալները (տոննա) | Չափաքանակները (տոննա) | Արտանետումների փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում (տոննա) | Չափաքանակները գերազանցող արտանետումների փաստացի ծավալները (տոննա) | Բնապահպանական վճարի դրույքաչափերը (դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող ծավալների համար բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը զրոյական չափաքանակների դեպքում բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Ընդամենը (հազ. դրամ) |
| [4.1] | [4.2] | [4.3] | [4.4] | [4.5] | [4.6] | [4.7] | [4.8] | [4.9] | [4.10] |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | |

- [4.1] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում ջրային ավազան փաստացի արտանետված՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշված վնասակար նյութերի և միացությունների անվանումները, իսկ [4.2] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում [4.1] սյունակում նշված փաստացի արտանետված վնասակար և միացությունների համապատասխան ամբողջ ծավալները,
- [4.3] սյունակում լրացվում են վնասակար նյութերը և միացությունները ջրային ավազան արտանետելու համար ՀՀ ջրային օրենսգրքին համապատասխան տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի կամ կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի ծավալները՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով:
- Ջրօգտագործման թույլտվություն չունենալու (այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվություններում ջրօգտագործման ծավալները կամ ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները կամ կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի մասին տվյալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [4.3] սյունակում լրացվում է «0»,
- [4.4] սյունակում լրացվում են ջրային ավազան արտանետված վնասակար նյութերի և միացությունների փաստացի ամբողջ ծավալների համար [4.3] սյունակում նշված համապատասխան չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [4.4] սյունակում լրացվում է «0»,
- [4.5] սյունակում լրացվում են ջրային ավազան արտանետված վնասակար նյութերի և միացությունների փաստացի ամբողջ ծավալների համար [4.3] սյունակում նշված համապատասխան չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([4.2] և [4.3] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու դեպքում կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [4.5] սյունակում լրացվում է «0»,
- [4.6] սյունակում լրացվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված համապատասխան դրույքաչափերը, իսկ [4.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([4.4] սյունակի) համար հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([4.4] սյունակի համապատասխան տող X [4.6] սյունակի համապատասխան տող (արտահայտված հազար դրամներով)),
- [4.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([4.5] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([4.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([4.5] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),

- [4.9] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում ջրային ավազան արտանետված վնասակար նյութերի և միացությունների համապատասխան փաստացի ամբողջ ծավալների ([4.4] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([4.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([4.6] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),
- [4.10] սյունակի տողերում լրացվում են [4.7], [4.8] և [4.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [4.7], [4.8], [4.9] և [4.10] սյունակների «ընդամենը» տողերում լրացվում են այդ սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | [5] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանում շրջակա միջավայրում տեղադրված թափոնների դասերն ըստ վտանգավորության աստիճանի | Հաշվետու ժամանակաշրջանում տեղադրված թափոնների փաստացի ամբողջ ծավալները (տոննա) | Չափաքանակները (տոննա) | Տեղադրված թափոնների փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում (տոննա) | Չափաքանակները (սահմանափակումները) գերազանցող տեղադրված թափոնների փաստացի ծավալները (տոննա) | Բնապահպանական վճարի դրույքաչափերը (դրամ) | Հաշվարկված վճարը սահմանաչափերի սահմաններում (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող ծավալների համար բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակների բացակայության դեպքում բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Ընդամենը (հազ. դրամ) |
| [5.1] | [5.2] | [5.3] | [5.4] | [5.5] | [5.6] | [5.7] | [5.8] | [5.9] | [5.10] |
| Առաջին դասի | | | | | | | | | |
| Երկրորդ դասի | | | | | | | | | |
| Երրորդ դասի | | | | | | | | | |
| Չորրորդ դասի | | | | | | | | | |
| Ոչ թունավոր և ոչ վտանգավոր | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | |

- [5.2] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղադրված փաստացի ամբողջ ծավալներն ըստ [5.1] սյունակում նշված դասերի,
- [5.3] սյունակում լրացվում են թափոնների տեղադրման համար «Թափոնների մասին» ՀՀ օրենքին համապատասխան տրամադրված թափոնների տեղադրման սահմանաքանակներով սահմանված տեղադրման ծավալները՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով: Թափոնների տեղադրման սահմանաքանակներ տրամադրված չլինելու՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.3] սյունակում լրացվում է «0»,
- [5.4] սյունակում լրացվում են փաստացի տեղադրված թափոնների փաստացի ամբողջ ծավալների համար [5.3] սյունակում նշված համապատասխան չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.4] սյունակում լրացվում է «0»,
- [5.5] սյունակում լրացվում են տեղադրված թափոնների փաստացի ամբողջ ծավալների համար [5.3] սյունակում նշված համապատասխան չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([5.2] և [5.3] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [5.5] սյունակում լրացվում է «0»,
- [5.6] սյունակում լրացվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերը, իսկ [5.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([5.4] սյունակի) համար հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([5.4] սյունակի համապատասխան տող X [5.6] սյունակի համապատասխան տող (արտահայտված հազար դրամներով)),
- [5.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([5.5] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([5.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([5.5] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),

- [5.9] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում շրջակա միջավայր տեղադրված թափոնների փաստացի ամբողջ ծավալների ([5.2] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([5.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([5.2] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),
- [5.10] սյունակի տողերում լրացվում են [5.7], [5.8] և [5.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [5.7], [5.8], [5.9] և [5.10] սյունակների «ընդամենը» տողերում լրացվում են այդ սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | [6] |
|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանում արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված և իրացվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների անվանումները | Հաշվետու ժամանակաշրջանում իրացված ապրանքների իրացման համապատասխան շրջանառությունը (հազ. դրամ) | Բնապահպանա-կան վճարի դրույքաչափերը (%) | Իրացված ապրանքների համար հաշվարկված բնապահպանական վճարը (հազ. դրամ) |
| [6.1] | [6.2] | [6.3] | [6.4] |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

- [6.1] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում արտադրված և իրացվող՝ «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում նշված շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների անվանումները, իսկ [6.2] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում [6.1] սյունակում նշված ապրանքների իրացման շրջանառության համապատասխան ամբողջ ծավալները,
- [6.3] սյունակում լրացվում են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված համապատասխան դրույքաչափերը, [6.4] սյունակում լրացվում են շրջակա միջավայրին վնաս պատճառող իրացված ապրանքների համար հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([6.2] սյունակի համապատասխան տող X [6.3] սյունակի համապատասխան տող (արտահայտված հազար դրամներով), իսկ [6.4] սյունակի «ընդամենը» տողում՝ այդ սյունակի բոլոր տողերի հանրագումարը:

## ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ

- Հաշվարկ-հաշվետվության բնօգտագործման վճարների հաշվետվության մասում (հաշվարկ-հաշվետվության [7], [8], [9], [10] և [11] բաժիններ) արտացոլվում են հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված մակերևութային ջրերի, արդյունահանված ստորերկրյա քաղցրահամ ջրերի և աղի, հանքային ջրերի (այդ թվում՝ արտադրված (ստացված) ածխաթթու գազի, մարված պինդ օգտակար հանածոների (բացառությամբ աղի), ինչպես նաև օգտագործված կենսապաշարների փաստացի ծավալները և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով ու ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N 864 որոշմամբ սահմանված կարգով բնօգտագործման վճարի հաշվարկը:

| ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | [7] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանում մակերևութային ջրերի օգտագործման տեսակներն ըստ օգտագործման նպատակների | Հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված մակերևութային ջրերի փաստացի ամբողջ ծավալները ($մ^3$) | Չափաքանակները ($մ^3$) | Ջրօգտագործման փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում ($մ^3$) | Չափաքանակները գերազանցող ջրօգտագործման փաստացի ծավալները ($մ^3$) | Բնօգտագործման վճարի դրույքաչափերը (դրամ) | Հաշվարկված վճարի գումարը չափաքանակների սահմաններում (հազ. դրամ) | Հաշվարկված վճարի գումարը չափաքանակները գերազանցող ծավալների համար բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Հաշվարկված վճարի գումարը զրոյական չափաքանակների դեպքում բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Ընդամենը (հազ. դրամ) |
| [7.1] | [7.2] | [7.3] | [7.4] | [7.5] | [7.6] | [7.7] | [7.8] | [7.9] | [7.10] |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | |

- [7.1] սյունակում լրացվում են ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N 864 որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի (Դրույքաչափեր) I բաժնով ըստ օգտագործման նպատակների սահմանված՝ հաշվետու ժամանակաշրջանում մակերևութային ջրերի փաստացի օգտագործման տեսակները, իսկ [7.2] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված մակերևութային ջրերի համապատասխան (ըստ [7.1] սյունակում նշված նպատակի) փաստացի ամբողջ ծավալները,
- [7.3] սյունակում լրացվում են ջրօգտագործման տեսակների համար ՀՀ ջրային օրենսգրքին համապատասխան տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման (մակերևութային ջրերի ջրառի) ծավալները՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով: Ջրօգտագործման թույլտվություն չունենալու (այդ թվում՝ ջրօգտագործման թույլտվություններում ջրօգտագործման ծավալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [7.3] սյունակում լրացվում է «0»,
- [7.4] սյունակում լրացվում են մակերևութային ջրերի օգտագործման փաստացի ամբողջ ծավալների համար [7.3] սյունակում նշված համապատասխան չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [7.4] սյունակում լրացվում է «0»,
- [7.5] սյունակում լրացվում են մակերևութային ջրերի օգտագործման փաստացի ամբողջ ծավալների համար [7.3] սյունակում նշված համապատասխան չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([7.2] և [7.3] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [7.5] սյունակում լրացվում է «0»,
- [7.6] սյունակում լրացվում են Դրույքաչափերի I բաժնով սահմանված բնօգտագործման վճարների համապատասխան դրույքաչափերը, իսկ [7.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([7.4] սյունակի) համար հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([7.4] սյունակի համապատասխան տող X [7.6] սյունակի համապատասխան տող (արտահայտված հազար դրամներով)),
- [7.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([7.5] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([7.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([7.5] սյունակի համապատասխան տող X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),
- [7.9] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում ջրօգտագործման ամբողջ փաստացի ծավալների ([7.2] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([7.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ

դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([7.2] սյունակի համապատասխան տող X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),

- [7.10] սյունակի տողերում լրացվում են [7.7], [7.8] և [7.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [7.7], [7.8], [7.9] և [7.10] սյունակների «ընդամենը» տողերում լրացվում են այդ սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐԻ ԵՎ ԱՂԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | [8] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանում ստորերկրյա քաղցրահամ ջրերի և աղի արդյունահանման տեսակներն ըստ արդյունահանման (օգտագործման) նպատակների | Հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված ստորերկրյա քաղցրահամ ջրերի և աղի փաստացի ամբողջ ծավալները (մ³ կամ տոննա) | Չափաքանակները (մ³ կամ տոննա) | Արդյունահանման փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում (մ³ կամ տոննա) | Չափաքանակները գերազանցող արդյունահանման փաստացի ծավալները (մ³ կամ տոննա) | Բնօգտագործման վճարի դրույքաչափը (դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող ծավալների համար եռապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը զրոյական չափաքանակների դեպքում կրկնապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Ընդամենը (հազ. դրամ) |
| [8.1] | [8.2] | [8.3] | [8.4] | [8.5] | [8.6] | [8.7] | [8.8] | [8.9] | [8.10] |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | |

- [8.1] սյունակում լրացվում են ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N 864 որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի (Դրույքաչափեր) I և II բաժիններով ըստ արդյունահանման (օգտագործման) նպատակների սահմանված ստորերկրյա քաղցրահամ ջրերի և աղի արդյունահանման փաստացի իրականացված տեսակները,
- [8.2] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում ստորերկրյա քաղցրահամ ջրերի և աղի արդյունահանված համապատասխան (ըստ [8.1] սյունակում նշված արդյունահանման (օգտագործման) նպատակների) ամբողջ պաշարները: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անմիջապես հորատանցքի (աղբյուրի) վրա հաշվիչ (չափիչ) սարքեր տեղադրված լինելու դեպքում [8.2] սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում հաշվիչ (չափիչ) սարքերով հաշվառված ջրի ծավալը, իսկ հաշվիչ (չափիչ) սարքեր տեղադրված չլինելու դեպքում` հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված ջրի ամբողջ ծավալը,
- [8.3] սյունակում լրացվում են ջրօգտագործման համար ՀՀ ջրային օրենսգրքին համապատասխան տրամադրված ջրօգտագործման թույլտվություններով սահմանված ջրօգտագործման (ստորերկրյա (ստորգետնյա) քաղցրահամ ջրերի արդյունահանման) կամ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքին համապատասխան կնքված հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման լիցենզային պայմանագրերով սահմանված օգտակար հանածոների (աղի) արդյունահանման ծավալները` հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով, ելնելով տարեկան ծրագրով հաստատված եռամսյակային համամասնություններից: Ջրօգտագործման թույլտվություն չունենալու (այդ թվում` ջրօգտագործման թույլտվություններում ստորերկրյա (ստորգետնյա) քաղցրահամ ջրերի արդյունահանման ծավալները չնշվելու) կամ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին համապատասխան ընդերքօգտագործման պայմանագրեր չունենալու (այդ թվում` պայմանագրում արդյունահանման ենթակա ծավալները չնշվելու)` զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [8.3] սյունակում լրացվում է «0»,
- [8.4] սյունակում լրացվում են ստորերկրյա քաղցրահամ ջրերի և աղի արդյունահանված փաստացի ամբողջ ծավալների համար [8.3] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [8.4] սյունակում լրացվում է «0»,
- [8.5] սյունակում լրացվում են ստորերկրյա քաղցրահամ ջրերի և աղի արդյունահանված փաստացի ամբողջ ծավալների համար [8.3] սյունակում նշված չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([8.2] և

[8.3] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [8.5] սյունակում լրացվում է «0»,

- [8.6] սյունակում լրացվում են Դրույքաչափերի I և II բաժիններով սահմանված բնօգտագործման վճարների համապատասխան դրույքաչափերը, իսկ [8.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([8.4] սյունակի) համար հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([8.4] սյունակի համապատասխան տող X [8.6] սյունակի համապատասխան տող (արտահայտված հազար դրամներով)),
- [8.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([8.5] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([8.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([8.5] սյունակի համապատասխան տող X համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),
- [8.9] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում արդյունահանված փաստացի ամբողջ ծավալների ([8.2] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([8.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([8.2] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),
- [8.10] սյունակի տողերում լրացվում են [8.7], [8.8] և [8.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [8.7], [8.8], [8.9] և [8.10] սյունակների «ընդամենը» տողերում՝ այդ սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԸ, ԱԾԽԱԹԹՈՒ ԳԱԶԻ ԱՐՏԱԴՐՎԱԾ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | [9] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջա-նում հանքային ջրի արդյունահանման տեսակներն ըստ օգտագործման նպատակների և ածխաթթու գազի արտադրությունը (ստացումը) | Հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված հանքային ջրի և արտադրված (ստացված) ածխաթթու գազի փաստացի համապատասխան ամբողջ ծավալները (մ³) | Չափաքանակները (մ³) | Արդյունահանված հանքային ջրի և արտադրված (ստացված) ածխաթթու գազի փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում (մ³) | Արդյունահանված հանքային ջրի և արտադրված (ստացված) ածխաթթու գազի չափաքա-նակները գերազանցող փաստացի ծավալները (մ³) | Բնօգտագործման վճարի դրույքաչափերը (դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցող ծավալների համար բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը զրոյական չափաքանակների դեպքում բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Ընդամենը (հազ. դրամ) |
| [9.1] | [9.2] | [9.3] | [9.4] | [9.5] | [9.6] | [9.7] | [9.8] | [9.9] | [9.10] |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | |

- [9.1] սյունակում լրացվում են ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N 864 որոշման 2-րդ կետով ու որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի (Դրույքաչափեր) II բաժնով ըստ նպատակների սահմանված՝ հաշվետու ժամանակաշրջանում հանքային ջրի հորատանցքի (աղբյուրի) շահագործման փաստացի իրականացման տեսակները: Միայն մեկ նպատակով շահագործելիս [9.1] սյունակում լրացվում է Դրույքաչափերի II բաժնով սահմանված հանքային ջրի արդյունահանման փաստացի տեսակը, իսկ միաժամանակ մեկից ավելի նպատակներով շահագործելիս [9.1] սյունակում լրացվում են հանքային ջրի արդյունահանման փաստացի իրականացված բոլոր տեսակները: Անկախ հորատանցքը (աղբյուրը) շահագործելու նպատակներից՝ այն դեպքում, երբ գազանջատիչից դուրս եկող խողովակի վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղադրված (միացված) է (են) ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր), պարտադիր կարգով [9.1] սյունակում լրացվում է նաև ածխաթթու գազ արտադրելու (ստանալու) նպատակը,
- [9.2] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված հանքային ջրի և արտադրված (ստացված) ածխաթթու գազի փաստացի ամբողջ ծավալները: Միայն մեկ նպատակով հանքային ջրերի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անմիջապես հորատանցքի (աղբյուրի) վրա տեղադրված գազանջատիչից դուրս եկող ջրախողովակի (առաջնային խողովակի) վրա ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր (առաջնային ջրահաշվիչ) տեղադրված լինելու դեպքում [9.2] սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում առաջնային ջրահաշվիչով հաշվառված ջրի ամբողջ ծավալը, իսկ առաջնային ջրահաշվիչ տեղադրված չլինելու

դեպքում՝ հաշվետու ժամանակաշրջանում փաստացի արդյունահանված ջրի ամբողջ ծավալը: Միաժամանակ մեկից ավելի նպատակներով հանքային ջրերի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս առաջնային խողովակին միացված հանքային ջրի օգտագործման յուրաքանչյուր նպատակի համար առանձնացված խողովակների (առանձնացված խողովակների) վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր (առանձնացված ջրահաշվիչներ) տեղադրված լինելու դեպքում [9.2] սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում ըստ օգտագործման առանձին նպատակների առանձնացված համապատասխան ջրահաշվիչներով հաշվառված ջրի ծավալները, առանձնացված ջրահաշվիչներ տեղադրված չլինելու դեպքում հաշվետու ժամանակաշրջանում առաջնային հաշվիչ սարքով հաշվառված ջրի ծավալները, իսկ դրա բացակայության դեպքում՝ հաշվետու ժամանակաշրջանում հանքային ջրի հորատանցքից (աղբյուրից) փաստացի արդյունահանված ջրի ամբողջ ծավալը: Գազանջատիչից դուրս եկող խողովակի վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր) տեղադրված (միացված) լինելու դեպքում, երբ մինչև ածխաթթու գազ ստանալու սարքն ընկած հատվածում գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղադրված է գազաչափ՝ [9.2] սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում գազաչափով հաշվառված ածխաթթու գազի ծավալը, իսկ գազաչափ տեղադրված չլինելու դեպքում՝ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հորատանցքից (աղբյուրից) փաստացի արդյունահանված հանքային ջրի ամբողջ ծավալը (անկախ հորատանցքը (աղբյուրը) շահագործելու նպատակներից),

- [9.3] սյունակում լրացվում են հանքային ջրի արդյունահանման համար ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքին համապատասխան կնքված հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման լիցենզային պայմանագրերով սահմանված օգտակար հանածոների արդյունահանման ծավալները՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով, ելնելով տարեկան ծրագրով հաստատված եռամսյակային համամասնություններից: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործման պայմանագրեր չունենալու (այդ թվում՝ պայմանագրում արդյունահանման ենթակա ծավալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [9.3] սյունակում լրացվում է «0»,
- [9.4] սյունակում լրացվում են հանքային ջրի փաստացի արդյունահանված ամբողջ ծավալների համար [9.3] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [9.4] սյունակում լրացվում է «0»,
- [9.5] սյունակում լրացվում են հանքային ջրի փաստացի արդյունահանված ամբողջ ծավալների համար [9.3] սյունակում նշված չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([9.2] և [9.3] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու դեպքում կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [9.5] սյունակում լրացվում է «0»,
- [9.6] սյունակում լրացվում են Դրույքաչափերի II բաժնով սահմանված բնօգտագործման վճարների համապատասխան դրույքաչափերը: Առաջնային ջրահաշվիչ կամ առանձնացված ջրահաշվիչներ տեղադրված լինելու դեպքում [9.6] սյունակում լրացվում է Դրույքաչափերի II բաժնով հանքային ջրի շահագործման համապատասխան նպատակի համար սահմանված դրույքաչափը: Առաջնային ջրահաշվիչ տեղադրված չլինելու դեպքում [9.6] սյունակում լրացվում է Դրույքաչափերի II բաժնով հանքային ջրի շահագործման տվյալ նպատակի համար սահմանված դրույքաչափը, իսկ առանձնացված ջրահաշվիչներ տեղադրված չլինելու դեպքում [9.6] սյունակում շահագործման յուրաքանչյուր տեսակի համապատասխան տողում լրացվում է Դրույքաչափերի II բաժնով հանքային ջրի արդյունահանման համար սահմանված՝ տվյալ հորատանցքի (աղբյուրի) փաստացի շահագործման տեսակներից ամենաբարձր դրույքաչափը: Գազանջատիչից դուրս եկող խողովակի վրա մինչև ածխաթթու գազ ստանալու սարքն ընկած հատվածում գազաչափ տեղադրված լինելու դեպքում [9.6] սյունակում լրացվում է Դրույքաչափերի II բաժնով ածխաթթու գազ ստանալու նպատակով տվյալ հանքավայրի համար սահմանված համապատասխան դրույքաչափը, իսկ գազաչափ տեղադրված չլինելու դեպքում՝ Դրույքաչափերի II բաժնով ածխաթու գազ ստանալու նպատակով հանքային ջրի արդյունահանման համար սահմանված դրույքաչափը,
- [9.7] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([9.4] սյունակի) համար հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([9.4] սյունակի համապատասխան տող X [9.6] սյունակի համապատասխան տող (արտահայտված հազար դրամներով)),
- [9.8] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([9.5] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([9.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([9.5] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով))
- [9.9] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում արդյունահանված հանքային ջրի ամբողջ փաստացի ծավալների ([9.2] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([9.6] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([9.2] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),
- [9.10] սյունակի տողերում լրացվում են [9.7], [9.8] և [9.9] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [9.7], [9.8], [9.9] և [9.10] սյունակների «ընդամենը» տողերում՝ այդ սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ՊԻՆԴ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՂԻ) ՄԱՐՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | | [10] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանում մարված պինդ օգտակար հանածոների տեսակները | Համապատասխան չափման միավորը | Հաշվետու ժամանակաշրջանում պինդ օգտակար հանածոների փաստացի մարված պաշարների համապատասխան ամբողջ ծավալները | Չափաքանակներն՝ արտահայտված համապատասխան չափման միավորով | Մարված օգտակար հանածոների փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցող մարված օգտակար հանածոների փաստացի ծավալները | Բնօգտագործման վճարի դրույքաչափերը (դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցելու համար բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը զրոյական չափաքանակների դեպքում բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Ընդամենը (հազ. դրամ) |
| [10.1] | [10.2] | [10.3] | [10.4] | [10.5] | [10.6] | [10.7] | [10.8] | [10.9] | [10.10] | [10.11] |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | | |

- [10.1] սյունակում լրացվում են ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N 864 որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի (Դրույքաչափեր) II բաժնով սահմանված պինդ օգտակար հանածոների՝ հաշվետու ժամանակաշրջանում փաստացի մարված տեսակները, [10.2] սյունակում լրացվում են պինդ օգտակար հանածոների համար սահմանված համապատասխան չափման միավորները (գրամ, կգ, տոննա, մ$^3$), իսկ [10.3] սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում պինդ օգտակար հանածոների համապատասխան տեսակների փաստացի մարված պաշարների ամբողջ ծավալները,
- [10.4] սյունակում լրացվում են պինդ օգտակար հանածոների համար ՀՀ ընդերքի մասին օրենսգրքին և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքին համապատասխան կնքված հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման լիցենզային պայմանագրերով սահմանված օգտակար հանածոների արդյունահանման (մարման) ծավալները՝ հաշվարկված հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով, ելնելով տարեկան ծրագրով հաստատված եռամսյակային համամասնություններից: ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործման պայմանագրեր չունենալու (այդ թվում՝ պայմանագրում արդյունահանման (մարման) ենթակա ծավալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [10.4] սյունակում լրացվում է «0»,
- [10.5] սյունակում լրացվում են պինդ օգտակար հանածոների փաստացի մարված ամբողջ ծավալների համար [10.4] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [10.5] սյունակում լրացվում է «0»,
- [10.6] սյունակում լրացվում են պինդ օգտակար հանածոների փաստացի մարված ամբողջ ծավալների համար [10.4] սյունակում նշված չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([10.3] և [10.4] սյունակների դրական

տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [10.6] սյունակում լրացվում է «0»,

- [10.7] սյունակում լրացվում են բնօգտագործման վճարի հաշվարկման համար համապատասխան դրույքաչափերը: Պինդ օգտակար այն հանածոների մասով, որոնց համար ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N864 որոշմամբ սահմանված կարգով բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հանածոյի միջազգային շուկայական միջին գնից (հիմք ընդունելով ՀՀ թանկարժեք մետաղների և քարերի պետական գանձարանի կողմից հաշվետու ժամանակաշրջանի համար հայտարարված գինը), [10.7] սյունակում լրացվում են Դրույքաչափերի II բաժնով սահմանված համապատասխան դրույքաչափերը: Եթե հաշվետու ժամանակաշրջանում տվյալ օգտակար հանածոյի իրացման փաստացի գնի և Դրույքաչափերի II բաժնում նշված համապատասխան դրույքաչափի արտադրյալը չի գերազանցում Դրույքաչափերի IV բաժնով սահմանված հաստատագրված դրույքաչափը կամ հաշվետու ժամանակաշրջանում մարված պաշարների իրացում չի կատարվել կամ իրացվել է ոչ թե օգտակար հանածոն, այլ դրա օգտագործման արդյունքում ստացված արտադրանքը կամ օգտակար հանածոն օգտագործվել է արդյունահանողի ներտնտեսական կարիքների համար՝ [10.7] սյունակում պարտադիր կարգով լրացվում են Դրույքաչափերի IV բաժնով սահմանված համապատասխան հաստատագրված դրույքաչափերը: Հաշվետու ժամանակաշրջանում օգտակար հանածոյի իրացման փաստացի գնի և Դրույքաչափերի II բաժնում նշված համապատասխան դրույքաչափի արտադրյալը Դրույքաչափերի IV բաժնով սահմանված հաստատագրված դրույքաչափից գերազանցելու դեպքում [10.7] սյունակում լրացվում են Դրույքաչափերի II բաժնով սահմանված համապատասխան դրույքաչափերը,
- [10.8] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([10.5] սյունակի) համար հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([10.5] սյունակի համապատասխան տող X [10.7] սյունակի համապատասխան տող (արտահայտված հազար դրամներով)),
- [10.9] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([10.6] սյունակ) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([10.7] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([10.6] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),
- [10.10] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում փաստացի մարված ամբողջ ծավալների ([10.3] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([10.7] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([10.3] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),
- [10.11] սյունակի տողերում լրացվում են [10.8], [10.9] և [10.10] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [10.8], [10.9], [10.10] և [10.11] սյունակների «ընդամենը» տողերում՝ սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| ԿԵՆՍԱՊԱՇԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ | | | | | | | | | | [11] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված կենսապաշարների տեսակները | Համապատասխան չափման միավորը | Հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված կենսապաշարների փաստացի համապատասխան ամբողջ ծավալները | Չափաքանակները՝ արտահայտված համապատասխան չափման միավորով | Օգտագործված կենսապաշարների փաստացի ծավալները չափաքանակների սահմաններում | Չափաքանակները գերազանցող օգտագործված կենսապաշարների փաստացի ծավալները | Բնօգտագործման վճարի դրույքաչափերը (դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակների սահմաններում (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը չափաքանակները գերազանցելու համար բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Հաշվարկված վճարը զրոյական չափաքանակների դեպքում բազմապատիկ դրույքաչափով (հազ. դրամ) | Ընդամենը (հազ. դրամ) |
| [11.1] | [11.2] | [11.3] | [11.4] | [11.5] | [11.6] | [11.7] | [11.8] | [11.9] | [11.10] | [11.11] |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | | | | | | | |

- [11.1] սյունակում լրացվում են ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N 864 որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի (Դրույքաչափեր) III բաժնով սահմանված կենսապաշարների՝ հաշվետու ժամանակաշրջանում փաստացի օգտագործված տեսակները, [11.2] սյունակում լրացվում են կենսապաշարների համար սահմանված համապատասխան չափման միավորները (մ3, կգ, հատ, հեկտար, գլուխ և այլն), իսկ [11.3] սյունակում՝ հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված կենսապաշարների փաստացի համապատասխան ծավալները,
- [11.4] սյունակում լրացվում են կենսապաշարների տեսակների համար ՀՀ օրենսդրության համաձայն սահմանված չափաքանակները: ՀՀ անտառային օրենսգրքի համաձայն բնափայտի և երկրորդական անտառանյութի օգտագործման (մթերման) համար անտառօգտագործման պայմանագրեր (այդ թվում՝ անտառահատման, անտառային տոմսեր, արմատի վրա բնափայտի մանր բացթողման օրդեր) չունենալու, ինչպես նաև օրենսդրության համաձայն կենսապաշարների մնացած տեսակների օգտագործման պայմանագրեր չունենալու (այդ թվում՝ պայմանագրում օգտագործման ենթակա ծավալները չնշվելու)՝ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [11.4] սյունակում լրացվում է «0»,
- [11.5] սյունակում լրացվում են օգտագործված կենսապաշարների փաստացի ամբողջ ծավալների համար [11.4] սյունակում նշված չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալները: Զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [11.5] սյունակում լրացվում է «0»,
- [11.6] սյունակում լրացվում են օգտագործված կենսապաշարների փաստացի ամբողջ ծավալների համար [11.4] սյունակում նշված չափաքանակները գերազանցող փաստացի ծավալները ([11.3] և [11.4] սյունակների դրական տարբերությունը): Դրական տարբերություն չառաջանալու կամ զրոյական չափաքանակների (սահմանափակումների) դեպքում [11.6] սյունակում լրացվում է «0»,
- [11.7] սյունակում լրացվում են կենսապաշարների համապատասխան տեսակների օգտագործման համար Դրույքաչափերի III բաժնով սահմանված բնօգտագործման վճարի համապատասխան դրույքաչափերը,
- [11.8] սյունակում լրացվում են չափաքանակները չգերազանցող փաստացի ծավալների ([11.5] սյունակի) համար հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([11.5] սյունակի համապատասխան տող X [11.7] սյունակի համապատասխան տող (արտահայտված հազար դրամներով)),
- [11.9] սյունակում լրացվում են չափաքանակները գերազանցող փաստացի ծավալների ([11.6] սյունակ) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([11.7] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնօգտագործման վճարի գումարները ([11.6] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),
- [11.10] սյունակում լրացվում են զրոյական դրույքաչափերի (սահմանափակումների) դեպքում օգտագործված կենսապաշարների փաստացի ամբողջ ծավալների ([11.3] սյունակի) համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված համապատասխան ([11.7] սյունակի նկատմամբ կիրառվող) բազմապատիկ դրույքաչափով հաշվարկված բնապահպանական վճարի գումարները ([11.3] սյունակի համապատասխան տող X օրենքով սահմանված համապատասխան բազմապատիկ դրույքաչափ (արտահայտված հազար դրամներով)),
- [11.11] սյունակի տողերում լրացվում են [11.8], [11.9] և [11.10] սյունակների համապատասխան տողերի հանրագումարները, իսկ [11.8], [11.9], [11.10] և [11.11] սյունակների «ընդամենը» տողերում՝ այդ սյունակների բոլոր տողերի հանրագումարները:

| | | |
|---|---|---|
| Տնօրեն (անհատ ձեռնարկատեր)<br>(ազգանունը, անունը<br>և ստորագրությունը)<br>____________________<br>____________________ | Հարկ վճարողի<br>կնիքը | Հաշվապահ (ազգանունը, անունը<br>և ստորագրությունը)<br>____________________<br>____________________ |

«_______» _______________20___թ.

Հաշվարկ-հաշվետվությունները կազմվում են երկու օրինակից և սահմանված ժամկետում ներկայացվում բնապահպանական մարմին գրանցման: Գրանցված հաշվարկ-հաշվետվության 1-ին էջի վերևի աջ անկյունում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով գրանցման համարը, գրանցման ամսաթիվը, գրանցում կատարողի անունը, ազգանունը և պաշտոնը: Նշված գրառումները հաստատվում են բնապահպանական մարմնի ղեկավարի

ստորագրությամբ և կնիքով:Գրանցված հաշվարկ-հաշվետվությունների երկրորդ օրինակները սահմանված ժամկետում ներկայացվում են համապատասխան հարկային մարմին:

Հաշվարկ-հաշվետվությունները կարող են կազմվել երեք օրինակից, սահմանված ժամկետում ներկայացվել բնապահպանական մարմին գրանցման, իսկ գրանցված հաշվարկ-հաշվետվությունների երկրորդ և երրորդ օրինակները սահմանված ժամկետում ներկայացվել համապատասխան հարկային մարմին: Հարկային մարմնում գրանցվելուց և կնքվելուց հետո հաշվարկ-հաշվետվության երրորդ օրինակը վերադարձվում է վճար վճարողին: